ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/3286/02/24 ք. Երևան
3 Մայիսի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /այսուհետ՝ դատարան/, նախագահությամբ դատավոր Ալֆրեդ Վարդանյանի, ծանոթանալով <<Ագաստ>> ՍՊ ընկերության հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

<<Ագաստ>> ՍՊ ընկերությունը 2023թ. ապրիլի 29-ին դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ 15.01.2024 թվականին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Նշված հայցադիմումը դատավոր Ա.Վարդանյանին Համակարգի միջոցով հասանելի է դարձել 2024թ. ապրիլի 30-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան, ինչպես նաև համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված պահանջներին:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

Տվյալ դեպքում, առնվազն հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, առկա չէ գործը գրավոր ընթացակարգով քննելու անհնարինություն, հետևաբար դատարանը գտնում է, որ գործը ենթակա է քննության գրավոր ընթացակարգով: Միաժամանակ, գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 2024թ. հունիսի 18-ին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125, 199-200, 201, 234.5-234.9 և 361 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<Ագաստ>> ՍՊ ընկերության ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ 15.01.2024 թվականին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 2024թ. հունիսի 18-ին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Ալֆրեդ Վարդանյան Digitally signed by VARDANYAN ALFRED

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am